նով կնքել է գեղը, ամառանոցը, ճահիճները, առուակը եւ յատուկ վանքը (աւերակ)։ Սակայն որձաքարեայ վիթխարի արձաններն ասում են, որ նրանք Յովհաննէս Մկրտչից 3000—4000 տարի առաջ են յրդկուած, քանդակուած եւ յիշեցնում են Մեծամօրը, Մեծմօրը կամ Մօրմեծին՝ վիշապազանց ջրերի մայր դիցուհուն՝ Անահիտին։ Այս պարագան աւելի հաստատում են Սպերի եւ Բիզէի մէջ տեղ գտնուած զոյգ լճակները Յովտակ (Այդրը) եւ Պալակցիս, իրենց համանման որձաքարեայ վիշապական արձաններով «Քառասունք անմահից» օթեւան (Քրքլար) լեռներից, եւ որոնցից սկիզբն է առնում Օրձոր առուակը եւ գալիս խառնւում է Ճորոխին։

1885ին Արագածի գագաթին, Կաղնէֆէր լճակի ափին առաջին անգամ նկատեցի Զիարէթի եւ Սրբահանի որձաքարէ արձանների երկու խոշոր համանմանները ճահիճներում գլորուած։ Այնքան մեծ էին, որ անհնար էր շարժել եւ քանդակներն աննկարելի էին, կասկածում էի, թէ արդեօք իրապէս վիշապական արձան են թէ ոչ։ Վերջին խժդժութիւնների ժամանակ դեղացիները այդ արձանները գլորել են բարձունքից եւ մէկի գլխից 2 մետրաչափ կտրել են, որ տանին հօր գերեզմանը զարդարեն։ 15 լուծ եզներ այդ կտորը չեն կարողացել քաշ տալ։ Զուհուրաթի, Սրբահանի եւ Արագածի վի-